ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ (Ք. ՆՅՈՒ ՅՈՐՔ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Ռուբեն Սիմոնյան:

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ք. Նյու Յորք, 2024թ. մայիսի 7-ից մայիսի 11-ը:

4. Հրավիրող կողմը.

ՄԱԿ տնտեսական և սոցիալական խորհրդի (ECOSOC)-ի նախագահ Պաուլա Նարվաեսը:

5. Գործուղման նպատակը.

Ս.թ. մայիսի 9-ից 10-ը ք. Նյու Յորքում տեղի ունեցավ ՄԱԿ Տնտեսական և սոցիալական խորհրդի հովանու ներքո կազմակերպված «Կայուն զարգացման նպատակներին ուղղված գիտության, տեխնոլոգիաների և նորարարության 9-րդ համաժողովը (Multi-Stakeholder Forum on Science, Technology and Innovation for the Sustainable Development Goals (STI Forum)), որին մասնակցում էին բարձր մակարդակի քաղաքականություն մշակողներ, կառավարությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ, գիտնականներ, ճարտարագետներ, նորարարներ, ձեռնարկատերեր, գիտական և տեխնոլոգիական համայնքների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Համաժողովն ուղղված էր պետությունների միջև խաղաղությանն ու բարեկեցության ամրապնդմանը:

ՀՀ ԲՏԱ նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանի մասնակցությունը «Կայուն զարգացման նպատակներին ուղղված գիտության, տեխնոլոգիաների և նորարարության 9-րդ համաժողովին (Multi-Stakeholder Forum on Science, Technology and Innovation for the Sustainable Development Goals (STI Forum)) նպատակ ուներ ակտիվորեն ներգրավվել քննարկումներում և նախաձեռնություններում, որոնք կենտրոնացած են եղել տեխնոլոգիայի և նորարարության ուժը օգտագործելու համար՝ կայուն զարգացման նպատակներն առաջ տանելու համար: Միջոցառման մասնակցության նպատակն էր ուսումնասիրել նորարարական մոտեցումները, կիսվել լավագույն փորձով և խթանել գործընկերային հարաբերությունները, որոնք կարող են առաջընթաց ապահովել Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) հասնելու ուղղությամբ:

Միջոցառման նպատակներից էր քննարկել թվային տեխնոլոգիաների դերը՝ մարդկանց կյանքը բարելավելու և ողջ աշխարհում կայուն ու համաչափ զարգացում ապահովելու գործում: Համաժողովը լայն հնարավորություն էր տարբեր բնագավառների ներկայացուցիչների համար (կառավարություններ, միջազգային կազմակերպություններ, գիտական և տեխնոլոգիական համայնք, քաղաքացիական հասարակություն)՝ ներկայացնելու ոլորտում գոյություն ունեցող խնդիրների համար երկարաժամկետ լուծումների նպատակով իրենց առաջարկությունները՝ նպաստելով կայուն թվային համագործակցությանն ու փորձի փոխանակմանը:

«STI» ֆորումում Ռուբեն Սիմոնյանը ներկայացրել է բարձր տեխնոլոգիական արդյունաբերության դերը համաշխարհային մարտահրավերների լուծման գործընթացում, ինչպիսիք են աղքատության հաղթահարումը, շրջակա միջավայրի կայունությունը և ներառական տնտեսական աճը, ինչպես նաև ցույց տալով Հայաստանի հանձնառությունը տեխնոլոգիական առաջընթացին և ԿԶՆ-ներին նրա պոտենցիալ ներդրումը:

ՀՀ ԲՏԱ նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանի մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ընդգծելու Հայաստանի ձեռքբերումներն ու նախաձեռնությունները գիտության, տեխնոլոգիաների և նորարարության ոլորտում:

Ընդհանուր առմամբ, Ռուբեն Սիմոնյանի մասնակցությունը «STI» ֆորումին ընդգծեց Հայաստանի միտումը՝ օգտագործելու տեխնոլոգիաները և նորարարությունները՝ որպես կայուն զարգացման նպատակներին հասնելու հզոր գործիքներ:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանի մասնակցությունը միջոցառմանը հնարավորություն ընձեռեց մասնագիտացված լսարանին ներկայացնել տեղեկատվություն բարձր տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանում առկա նորարարությունների ու զարգացումների վերաբերյալ, գործընկերային կապեր հաստատելու ուղղությամբ բանակցություններ վարել միջոցառման մասնակից տարբեր պետությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև կատարել ոլորտային համագործակցության, ծրագրերի ու հնարավորությունների ուսումնասիրություն:

6. Կայացած հանդիպումները և քննարկված թեմաները.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանը հանդիպում է ունեցել տարբեր երկների ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում ներկայացրել է ՀՀ ԲՏԱ նախարարության գործունեությունը, պետական և մասնավոր հատվածի հետ համագործակցությունը, միաժամանակ, քննարկվել է փորձի փոխանակման հնարավորությունը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Գիտության, տեխնոլոգիաների և նորարարության 9-րդ համաժողովին ՀՀ ԲՏԱ նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանը հանդես է եկել որպես բանախոս:

Ռուբեն Սիմոնյանն իր ելույթում նշել է, որ Հայաստանը որպես զարգացող երկիր՝ կարևորում է գիտության, տեխնոլոգիաների և նորարարության դերը կայուն զարգացման համար՝ նպատակ ունենալով դառնալ տեխնոլոգիական և ինովացիոն տարածաշրջանային կենտրոն:

Ելույթում նշվել է, որ գիտության, տեխնոլոգիաների և նորարարության մեջ մարդկային կապիտալի հզորացման համար մեծ ուշադրություն է դարձնում երիտասարդներին և կանանց:

Եզրափակելով իր ելույթը, նշել է, որ գիտության, տեխնոլոգիաների և նորարարության ոլորտում միջազգային համագործակցությունը և համերաշխությունը կարող են կարևոր դեր

խաղալ ԿԶՆ-ների իրականացման արագացման և 2030 թվականի օրակարգի ավելի արդյունավետ և ճկուն առաջխաղացման համար նոր հնարավորություններ ստեղծելու գործում:

Երկօրյա այցի շրջանակներում Ռուբեն Սիմոնյանը մասնակցել է «Գիտական, տեխնոլոգիական և նորարարական լուծումների դերը որպես կայուն զարգացման նպատակների իրականացման միջոց» խորագրով հարակից միջոցառմանը: Միջոցառմանը որպես բանախոսներ մասնակցեցին նաև ՄԱԶԾ Եվրոպական և ԱՊՀ տարածաշրջանային բյուրոյի տնօրենի տեղակալը, ՄԱԿ ԳՔ տեխնոլոգիական հարցերով հանձակատարի հատուկ խորհրդականը, «Էնթերփրայզ Արմենիայի» գլխավոր տնօրեն Լևոն Օհանեսյանը և ներդրումների գծով տնօրեն Գոհար Գալյանը, «ԹՈՒՄՈ» ստեղծարար կենտրոնի Լոս Անջելեսի մասնաճյուղի ղեկավար Սոյեր Հեսկոկը: Միջոցառմանը բացման խոսքում ՄԱԿ-ում (Նյու Յորք) ՀՀ մշտական ներկայացուցիչ Միեր Մարգարյանն անդրադարձավ ՄԱԿ զարգացման համակարգի դերակատարությանը՝ նոր մարտահրավերներին գիտելիքահեն մոտեցումների կիրառման համատեքստում: Շեշտվեց թվային և նորարարական տեխնոլոգիաների նշանակությունը հատուկ իրավիճակում գտնվող երկրների սոցիալ-տնտեսական և հումանիտար կարիքներին արձագանքելու համար: ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանը ներկայացրեց գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների ոլորտում Հայաստանում տեղ գտած զարգացումները, ինչպես նաև պետական և մասնավոր հատվածների համագործակցությամբ իրականացվող մի շարք ծրագրեր:

Ելույթում նշվեց Կառավարության տեսլականը՝ տեսնել Հայաստանը որպես առաջատար խաղացող համաշխարհային տեխնոլոգիական լանդշաֆտում, որը ճանաչված է իր նորարարությամբ, ձեռներեցությամբ և թվային ենթակառուցվածքով:

Նախարարության նպատակն է ստեղծել և ամրապնդել բարձր տեխնոլոգիաների, թվայնացման կիբեռանվտանգության, կապի, փոստի, ինպես նաև տիեզերքի ոլորտում կայուն զարգացման պայմանները: Այս նպատակներին հասնելու համար ՀՀ ԲՏԱ նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանը ներկայացրեց վերը նշված ուղղություններով իրականացվող բարեփոխումները և ծրագրերը. լայնաշերտ ինտերնետ կապի հասանելիություն, 5G ցանցի զարգացում, ստարտափ էկոհամակարգի զարգացում, նորարարության խթանում, պետական

աջակցության ծրագրեր, թվայնացմանն ուղղված ծրագրերի իրականացում, փոքր և միջին ընկերությունների զարգացման խթանում, վերազգային (MNC) ընկերությունների ներգրավումը Հայաստանի շուկա:

Հարակից միջոցառման շրջանակներում կայացել է հանդիպում նաև Վրաստանի Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարի տեղակալ Իռակլի Նադառեիշվիլիի հետ: Երկկողմ հանդիպման ժամանակ քննարկվել են տարածաշրջանային փոխգործակցության եզրերը, երկկողմ համագործակցության հնարավորությունները: Մասնավորապես՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում կազմակերպել հանդիպում՝ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում իրականացվող ծրագրերի շուրջ փորձի փոխանակմանը և հնարավոր համատեղ նախագծերի քննարկման նպատակով:

Համաշխարհային տեխնոլոգիաների լանդշաֆտում Հայաստանը ձգտում է իր տեղն ունենալ որպես տեխնոլոգիական կենտրոն բարձր տեխնոլոգիական ոլորտում: Սահիկաշարում նշվեց նաև Հայաստանում 2024թ.-ին պլանավորված ցուցահանդեսները և համաժողովները՝ «WCIT-2024», «DigiTech-2024», «Engineering Week», «Silicon Mountains»:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եզրակացություններ, ժամկետներ, պատասխաններ ակընկալող արդյունքներ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռուբեն Սիմոնյանը միջոցառման ժամանակ նշել է, որ այս տարի հոկտեմբերի 4-ից 7-ը Հայաստանում անցկացվելու է խոշորագույն միջոցառումներից մեկը՝ Տեղեկատվական Տեխնոլոգիաների Համաշխարհային Կոնգրեսը (WCIT): Ռուբեն Սիմոնյանը հրավիրել է բոլորին մասնակցելու այդ միջոցառմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվ

ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ
14.05.2024թ